Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-444-28.11.2022-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Աղբահանության եւ սանիտարական մաքրման մասին» 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-237-Ն օրենքի՝ (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում «սույն օրենքով,» բառերից հետո լրացնել «Հարկային օրենսգրքով,» եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով,» բառերը:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

1) աղբ՝ կոշտ կենցաղային թափոններ, ներառյալ թափոնները, որոնք գոյանում են համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների սանիտարական մաքրման արդյունքում.

2) աղբահանություն՝ գոյացող աղբի, ինչպես նաեւ շինարարական ու խոշոր եզրաչափերի աղբի հավաքում, պահում, փոխադրում եւ տեղադրում աղբավայրում, այդ թվում՝ դրանց տեսակավորում ու փոխադրում՝ աղբի վերաօգտագործման, օգտահանման, վերամշակման եւ վնասազերծման նպատակով.

3) կենսաքայքայվող (օրգանական) աղբ՝ աէրոբիկ կամ անաէրոբիկ քայքայման ենթարկվող թափոն (օրինակ՝ սննդային թափոն, այգիներում ծառերի էտման, բույսերի ու թփերի սանիտարական մաքրման հետեւանքով առաջացող աղբ եւ այլն).

4) շինարարական աղբ՝ շինարարության, վերակառուցման (ներառյալ՝ քանդման), վերականգնման, ուժեղացման, արդիականացման, ինչպես նաեւ տարածքների բարեկարգման գործունեության արդյունքում առաջացող աղբ.

5) խոշոր եզրաչափերի աղբ՝ մարդու կենսագործունեության հետեւանքով կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում առաջացող աղբ, որոնց չափերը գերազանցում են 1 խորանարդ մետրը, եւ որոնց ֆիզիկական հատկություններից ելնելով (չափ, ծավալ կամ քաշ)՝ անհնար է դրանց հավաքումը, պահումը կամ փոխադրումը աղբի համար նախատեսված տեխնիկական միջոցներով.

6) աղբաման՝ աղբի կուտակման համար նախատեսված տարողություն, որոնց ձեւն ու չափը սահմանվում է համապատասխան համայնքի ավագանու կողմից.

7) աղբամուղ՝ բազնաբնակարան շենքերում ներկառուցված աղբ հավաքման, ուղղահայաց տեղափոխման եւ ժամանակավոր պահման համար նախատեսված ինժեներական սարքավորումների համալիր.

8) աղբահավաք խուց՝ բազմաբնակարան կամ հասարակական շենքերում աղբի ժամանակավոր պահման համար նախատեսված տարածք.

9) աղբամանների հարթակ՝ 0.75 խորանարդ մետր եւ ավել տարողությամբ աղբամանների տեղակայման համար նախատեսված տարածք, որոնց տեղադիրքը սահմանվում է սանիտարական նորմերին ու յուրաքանչյուր համայնքի աղբահանության սխեմաներին համապատասխան.

10) փոխաբեռնման կայան՝ բնապահպանական եւ տնտեսական արդյունավետությունից ելնելով աղբի ժամանակավոր պահման, սեղմման եւ հնարավոր տեսակավորման համար նախատեսված կայան.

11) աղբի հավաքման կենտրոն՝ հատուկ հատկացված տարածք, որտեղ հավաքվում է տեսակավորված աղբը՝ հետագա օգտահանման, վերաօգտագործման, վերամշակման եւ վնասազերծման նպատակով.

12) աղբավայր՝ բնապահպանական, քաղաքաշինական եւ սանիտարական նորմերին համապատասխան հատուկ ինժեներական կառույցների համակարգ՝ նախատեսված աղբի անվնաս տեղադրման, մեկուսացման եւ չեզոքացման համար.

13) սանիտարական մաքրում՝ համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների, այգիների, զբոսայգիների, պուրակների, հրապարակների, խաղահրապարակների, բակերի, մայթերի, վերգետնյա եւ ստորգետնյա անցումների, կամուրջների, սիզամարգերի, լողափերի, շատրվանների, ճամփեզրերի, կողնակների եւ ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումը աղբից, տերեւակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից եւ փողոցների երթեւեկելի մասերի ջրում-լվացումը, փողոցների, կամուրջների, անցումների եւ մայթերի՝ ձյունից եւ սառույցից մաքրումը, համայնքի ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների եւ աղբամանների հարթակների սպասարկումը.

14) օպերատոր՝ համայնքին կամ համայնքներին, կամ դրանց վարչական տարածքում կամ տարածքի մի մասում աղբահանության եւ (կամ) սանիտարական մաքրման ծառայություններ մատուցող կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր.

15) աղբի քանակի նվազեցում՝ աղբի գոյացման վայրում՝ սկզբնաղբյուրում, գոյացող աղբի քանակի նվազեցման նպատակով համալիր միջոցառումների կիրառում.

16) աղբի տեսակավորում՝ վերաօգտագործման, օգտահանման եւ վերամշակման ենթակա աղբի տեսակների տարանջատումն ու առանձին հավաքումը աղբի գոյացման վայրում՝ սկզբնաղբյուրում, կամ աղբի տեսակավորման կայաններում.

17) աղբի օգտահանում՝ աղբի օգտակար օգտագործում այլ ապրանքի (արտադրանքի) արտադրության համար, ներառյալ վերաօգտագործումը, երկրորդային ռեսուրսների ստացումը եւ աղբից օգտակար բաղադրիչների առանձնացումը.

18) աղբի վերաօգտագործում՝ աղբի օգտագործում ի սկզբանե նախատեսված կամ այլ նպատակով, առանց էներգիայի վերականգնման.

19) աղբի վերամշակում՝ տեխնոլոգիական գործընթացների արդյունքում աղբի ֆիզիկական, քիմիական եւ կենսաբանական հատկությունների փոփոխություն.

20) աղբի փոխադրում՝ աղբի հավաքում եւ տեղափոխում դրանց կուտակման վայրից դեպի վերաօգտագործման, վերամշակման, օգտահանման, վնասազերծման վայրեր եւ(կամ) աղբավայր.

21) աղբի սեփականատեր՝ աղբ գոյացնող ֆիզիկական, իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, ում տիրապետման, օգտագործման ու տնօրինման ներքո է աղբը.

22) աղբահանության եւ սանիտարական մաքրման կառավարման տեղական պլան՝ յուրաքանչյուր համայնքում գոյացող աղբի հավաքման, տեղափոխման, պահպանման, տեղադրման (հեռացման), վերամշակման ու օգտահանման գործընթացների պլանավորում, իրագործում ու մշտադիտարկում.

23) աղբահանության եւ սանիտարական մաքրման տարածաշրջանային գոտիավորված սխեմա՝ Հայաստանի Հանրապետության տարածքում աղբահանության առավել արդյունավետ գոտիավորում՝ կախված աշխարհագրական տեղադիրքերից, գոյացող աղբի քանակից և տեսակից »:

2. Այն հասկացությունները, որոնք սահմանված չեն սույն օրենքով, ունեն «Թափոնների մասին» օրենքով սահմանված հասկացությունների իմաստը:»:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 4. Աղբահանության եւ սանիտարական մաքրման ոլորտի պետական քաղաքականության հիմնական սկզբունքները եւ զարգացման ուղղություններն ու նպատակները

1. Աղբահանության եւ սանիտարական մաքրման ոլորտի պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն են.

1) մարդու առողջության եւ շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցումը եւ չեզոքացումը.

2) բնակության համար հարմարավետ եւ էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովումը.

3) Տարածքների աղտոտման, աղբակույտերի առաջացման անթույլատրելիությունը եւ տարածքների մաքրումը աղբից.

4) առաջացող աղբի քանակի նվազեցումը.

5) աղբի տեսակավորման, վերաօգտագործման, վերամշակման եւ օգտահանման գործողությունների կիրառումը եւ աղբավայրերում տեղադրվող աղբի ծավալների նվազեցումը.

6) շրջանաձեւ տնտեսության խթանումը.

7) աղբահանության ծառայության վճարովի լինելը:

2. Աղբահանության եւ սանիտարական մաքրման ոլորտի պետական քաղաքականության զարգացման ուղղություններն ու նպատակներն են.

1) աղբահանության եւ սանիտարական մաքրման պարտադիր եւ պարբերաբար իրականացումը.

2) աղբի տեսակավորված համակարգի ներդրումը.

3) հանրապետության ողջ տարածքում գոյացող աղբի հավաքման, տեղափոխման եւ անվտանգ հեռացման կամ օգտահանման ու վերամշակման ապահովումը.

4) առաջացող աղբի առավելագույնս օգտահանումը.

5) սակավաթափոն եւ անթափոն միջոցառումների եւ տեխնոլոգիաների կիրառումը.

6) աղբահանության եւ սանիտարական մաքրման աշխատանքների մեքենայացումը.

7) ոլորտում միջհամայնքային համագործակցությունը.

8) համայնքային բյուջեի հաշվին կամ հանրային-մասնավոր համագործակցության շրջանակներում աղբահանության եւ սանիտարական մաքրման աշխատանքների իրականացումը:»:

Հոդված 4. Օրենքի 4.1-ին հոդվածի՝

1. 1-ին մասի 3-րդ ենթակետում «հեռացման» բառից հետո լրացնել «, առաջացող աղբի քանակի նվազեցմանն ուղղված» բառերը.

2. 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.2-րդ եւ 3.3-րդ կետերով.

«3.2) հաստատում է Հայաստանի Հանրապետության աղբահանության եւ սանիտարական մաքրման տարածաշրջանային գոտիավորված սխեմաները.

3.3) հաստատում է գոյություն ունեցող եւ գործող աղբավայրերի շահագործման, բարեկարգման ու փակման նվազագույն նորմերը:»:

Հոդված 5. Օրենքի 4.2-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի 5-րդ կետում «չհսկվող եւ չարտոնագրված» բառերը փոխարինել «բնապահպանական, սանիտարական եւ քաղաքաշինական նորմերին չհամապատասխանող» բառերով.

2. 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.1-ին կետով.

«4.1) հաստատում է աղբավայրերի ու փոխաբեռնման կայանների նախագծման, կառուցման, շահագործման նորմերն ու կարգերը, աղբի տարբեր տեսակների հավաքման, տեղափոխման, պահման ու հեռացման ընթացակարգերը, աղբի հավաքման եւ փոխադրման համար ներգրավվող կազմակերպությունների համար գործունեության պայմանները, աղբահանության եւ սանիտարական մաքրման ոլորտի մեթոդական ուղեցույցները.»:

Հոդված 6. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.3-րդ եւ 4.4-րդ հոդվածներով.

«Հոդված 4.3. Աղբի նկատմամբ սեփականության իրավունք

1. Աղբը հանդիսանում է սեփականության օբյեկտ: Աղբ առաջացնողը ձեռք է բերում աղբի սեփականության իրավունք դրա գոյացման պահից, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

2. Աղբի նկատմամբ սեփականության իրավունքը պատկանում է ֆիզիկական, իրավաբանական անձին եւ անհատ ձեռնարկատերերին, որոնց գործունեությունը հանգեցնում է աղբի առաջացմանը, եւ իրենց սեփականության իրավունքի իրացման ընթացքում, պարտավոր են միջոցներ ձեռնարկել շրջակա միջավայրի եւ հանրային առողջության վնասը կանխելու համար:

3. Աղբի սեփականատերն իրավունք ունի դրանց տնօրինման, այդ թվում՝ օտարման եւ հեռացման այլ գործարքի պայմանագրի հիման վրա այլ անձանց փոխանցել սեփականության իրավունքը, եթե այդ անձիք ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աղբահանության ոլորտում գործունեություն իրականացնելու թույլտվություն:

4. Աղբի նկատմամբ սեփականության իրավունքը դադարում է բնապահպանական եւ սանիտարական նորմերին համապատասխան այն սեփականության իրավունքով կամ որևէ այլ իրավունքով տիրապետման կամ օգտագործման տարածքից հեռացնելու պահից:

5. Հողամասերի սեփականատերերը կամ օգտագործողները, որոնց տարածքում հայտնաբերվել են իրենց չպատկանող աղբ, պարտավոր են այդ մասին տեղեկացնել տեղական ինքնակառավարման մարմնին հայտնաբերելուց ոչ ուշ քան աշխատանքային օրվա 24 ժամվա ընթացքում: Տեղական ինքնակառավարման մարմինն էլ իր հերթին պարտավոր է միջոցներ ձեռնարկել աղբի սեփականատիրոջ որոշման եւ դրա հետ գործածության մասով՝ տեղեկացվելուց հետ եռօրյա ժամկետում:

Հոդված 4.4 Աղբահանության եւ սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանը

1. Աղբահանության եւ սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանը հաստատում է համայնքի ավագանին՝ համայնքի հնգամյա զարգացման ծրագրին, ինչպես նաեւ ամենամյա աշխատանքների պլաններին կից հավելվածով:

2. Աղբահանության եւ սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանը բաղկացած է հետեւյալ բաժիններից.

1) առկա իրավիճակի գնահատում.

2) պլանավորում.

3) մշտադիտարկում եւ հաշվետվողականություն:

3. Աղբահանության եւ սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանի մեթոդական ուղեցույցը հաստատում է աղբահանության եւ սանիտարական մաքրման ոլորտի պետական կառավարման լիազորված մարմինը»:

Հոդված 7. Օրենքի 5-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 5. Աղբահանության վճարը

1.Աղբահանության վճարը սույն օրենքով նախատեսված վճարողների կողմից աղբահանության դիմաց սույն օրենքով սահմանված կարգով եւ սույն օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում համայնքի ավագանու կողմից սահմանված չափով համայնքի բյուջե կամ արտաբյուջե գանձվող պարտադիր գանձույթ է:

2. Աղբահանության վճարի կամ դրա տեսակի փոփոխման դեպքում սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անձիք պարտադիր իրազեկում են աղբահանության փոփոխված վճարի չափի կամ դրա տեսակի մասին աղբահանության վճար վճարողներին՝ մինչեւ հաջորդ ամսվա 5-ը ներառյալ: Ընդ որում, իրազեկումն իրականացվում է համայնքի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակմամբ, իսկ ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերի ու շինությունների դեպքում՝ աղբահանության վճարողի հաշվառման հասցեին կամ վերջինիս կողմից տրամադրված էլեկտրոնային փոստին ծանուցում ուղարկելու միջոցով:

3. Աղբահանության լրացուցիչ ծառայությունների մատուցման անհրաժեշտության դեպքում՝ աղբահանության ծառայություն մատուցող ու ստացող կողմերի միջեւ կնքվում է պայմանագիր՝ սահմանելով դրույքաչափը, աղբահանության ծառայությունների մատուցման կարգն ու ձեւը:»:

Հոդված 8. Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասում ում «արգելվում է» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքի 21.1 հոդվածով սահմանված դեպքերի» բառերը:

Հոդված 9. Օրենքի 8-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «իրականացնում են» բառերից հետո լրացնել «համապատասխան տեխնիկայի ու սարքավորումների հագեցվածությամբ» բառերը.

2. Հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 8-րդ մասով.

«8. Տեսակավորված աղբի հավաքում եւ փոխադրում կարող են իրականացնել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձիք, ինչպես նաեւ աղբի սեփականատերը,

իրավաբանական, ֆիզիկական անձիք ու անհատ ձեռնարկատերերը՝ համայնքի թույլտվության հիման վրա:»:

Հոդված 10. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1. 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Աղբի հավաքումը կատարվում է՝

1) անմիջապես աղբ գոյացնողից եւ հեռացվում է անմիջապես աղբատար մեքենա՝ առանց աղբամաններում կուտակելու.

2) աղբամանների միջոցով՝ աղբը հավաքվում կամ պահվում է համայնքի ընդհանուր օգտագործման տարածքներում այդ նպատակով սահմանված կամ նախատեսված հատուկ հարթակների վրա տեղադրված համայնքի կամ օպերատորի տրամադրած տարողություններում՝ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների եւ նորմերի պահանջների պահպանմամբ.

3) աղբամուղերի միջոցով՝ աղբը հավաքվում է աղբահավաք խցերում՝ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների եւ նորմերի պահանջների պահպանմամբ.

4) փոխաբեռնման կայանների միջոցով, որտեղ ժամանակավոր հավաքվում, սեղմվում եւ հնարավոր տեսակավորվում է աղբը՝ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների եւ նորմերի պահանջների պահպանմամբ, այնուհետեւ տեղափոխվում վերամշակման, օգտահանման արտարդամասեր կամ աղբավայր.

5) աղբի հավաքման կենտրոնների միջոցով, որտեղ ժամանակավոր հավաքվում է տեսակավորված աղբը՝ դրանց հետագա գործածության նպատակով: Ընդ որում, աղբի հավաքման կենտրոններ տեսակավորված աղբը կարող է տեղափոխել օպերատորը, ինչպես նաեւ ֆիզիկական, իրավաբանական անձիք եւ անհատ ձեռնարկատերերը՝ իրենց միջոցների հաշվին՝ համայնքի ղեկավարի թույլտվությամբ:»:

2. 3-րդ մասում «Ոչ կենցաղային» բառերը փոխարինել «Շինարարական» բառով, «հավաքվում եւ» բառերը փոխարինել «հավաքվում է անմիջապես աղբ գոյացնողից առանց աղբամաններում կուտակելու կամ»» բառերով:

3. Հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-ին, 3.2-րդ եւ 4.1-ին մասերով.

«3.1. Օգտահանման եւ վերամշակման ենթակա աղբը (թղթե, ապակե, պլաստիկ եւ կենսաքայքայվող աղբ) հավաքվում է համայնքի, օպերատորի կամ սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված անձանց կողմից տրամադրված առանձնացված աղբամաններում կամ կոնտեյներներում:

3.2. Վտանգավոր թափոնների հավաքման գործընթացներն իրականացվում են «Թափոնների մասին» օրենքով սահմանված կարգով:»:

4.1. Աղբամաններում արգելվում է տեղադրել կամ պահել արտադրության թափոնները, էլեկտրոնային եւ էլեկտրատեխնիկական սարքավորումների թափոնները, սնդիկ

պարունակող լամպերը եւ այլ արտադրանքը, էլեկտրական կուտակիչները եւ մարտկոցները, անվադողերը, այրվող, շիկացած կամ տաք աղբը, բժշկական թափոնները, խոշոր եզրաչափերի աղբը, ձյունը եւ սառույցը, հեղուկ թափոնները, ինչպես նաեւ այլ վտանգավոր թափոններ, որոնք կարող են վնաս հասցնել աղբահանություն իրականացնող անձանց կյանքին եւ առողջությանը:»:

Հոդված 11. Օրենքի 11-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2-րդ եւ 3-րդ մասերով.

«2. Աղբի փոխադրումն իրականացվում է դրա համար նախատեսված հատուկ մասնագիտացված տեխնիկայի եւ համապատասխան անձնակազմի միջոցով՝ սանիտարահիգիենիկ կանոններին եւ նորմերին, ինչպես նաեւ սանիտարական սխեմային համապատասխան:

3. Շինարարական, խոշոր եզրաչափերի, օգտահանման եւ վերամշակման ենթակա աղբը փոխադրվում է առանձին-առանձին՝ սահմանված նորմերին ու կանոններին համապատասխան:»:

Հոդված 12. Օրենքի 12-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 12. Աղբի տեղադրմանը եւ աղբավայրերի շահագործմանը ներկայացվող պահանջները

1. Աղբը տեղադրվում է բնապահպանական, սանիտարական եւ քաղաքաշինական նորմերին համապատասխանող աղբավայրերում կամ ենթարկվում է վերամշակման:

2. Աղբավայրերում աղբի տեղադրումն իրականացվում է աղբավայրերի շահագործման եւ սանիտարահիգիենիկ կանոնների պահանջների պահպանմամբ:

3. Համայնքային աղբավայրերի դեպքում աղբի տեղադրման համար վճարը սահմանում է համայնքի ավագանին:

4. Արգելվում է աղբի տեղադրումը դրա համար չնախատեսված վայրերում:

5. Արգելվում է պայթուցիկ եւ դյուրավառ նյութերի, բժշկական հաստատություններից ու սպանդանոցներից առաջացած եւ այլ կենսաբանական թափոնների, էլեկտրոնային եւ էլեկտրատեխնիկական սարքավորումների թափոնների, սնդիկ պարունակող լամպերի եւ այլ արտադրանքի, էլեկտրական կուտակիչների եւ մարտկոցների, փոխադրամիջոցների եւ դրանց անվադողերի, ինչպես նաեւ առանց հատուկ տարրաների մեջ պահեստավորված հեղուկ թափոնների տեղադրումը աղբավայրերում:

6. Սահմանափակվում է կենսաքայքայվող աղբի տեղադրումը աղբավայրերում:

7. Արգելվում է աղբավայրում աղբի բաց եղանակով այրումը:

8. Աղբավայրերը շահագործող օպերատորները շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության բացահայտման եւ կանխարգելման նպատակով իրականացնում են

աղբավայրի հսկողություն, ինչպես նաեւ հակահրդեհային միջոցառումներ՝ աղբի ինքնայրումը կանխելու համար:»:

Հոդված 13. Օրենքի 13-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 13. Աղբահանության եւ սանիտարական մաքրման սխեմաներին ներկայացվող պահանջները

1. Աղբահանության եւ սանիտարական մաքրման սխեման պարունակում է հետեւյալ հիմնական տարրերը. առաջացող աղբի ծավալների հաշվարկը, սանիտարական մաքրման ենթակա տարածքները, սանիտարական մաքրման աշխատանքների ծավալները, աղբի հավաքման, պահման եւ փոխադրման մեթոդներն ու ժամային գրաֆիկները, աղբի տեղադրման, տեսակավորման եւ վնասազերծման, վերամշակման ու օգտահանման ձեւերն ու մեթոդները, անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները, սանիտարական մաքրման ենթակա հուշարձանների տեղակայումը:

2. Համայնքի աղբահանության եւ սանիտարական մաքրման սխեման հաստատում է համայնքի ավագանին:

3. Աղբի հավաքման, կուտակման, ժամանակավոր պահման, փոխադրման, վերաօգտագործման, օգտանահման, վնասազերծման, վերամշակման եւ աղբավայրում տեղադրման գործունեության կազմակերպման համար հանրապետության աղբահանության տարածաշրջանային գոտիավորված տարածքների համար հաստատվում են աղբահանության եւ սանիտարկան մաքրման սխեմաները, որոնք ներառում են՝

1) գոտիավորված տարածքում աղբ առաջացնող աղբյուրների վերաբերյալ տվյալներ.

2) գոտիավորված տարածքում գոյացող աղբի ծավալի եւ տեսակների վերաբերյալ տվյալներ.

3) գոտիավորված տարածքում վերաօգտագործման, վնասազերծման, օգտահանման եւ վերամշակման ենթակա աղբի նպատակային ցուցանիշների վերաբերյալ տվյալներ.

4) գոտիավորված տարածքում աղբի կուտակման վայրերի գտնվելու վերաբերյալ տեղեկատվություն.

5) գոտիավորված տարածքում օգտահանման, վնասազերծման, վերամշակման ենթակա աղբի եւ աղբի հեռացման օբյեկտների գտնվելու վայրի վերաբերյա տվյալներ.

6) գոտիավորված տարածքում նախատեսվող աղբի վերամշակման, օգտահանման, վնասազերծման օբյեկտների եւ աղբավայրերի կառուցման վերաբերյալ տեղեկատվություն

7) գոտիավորված տարածքի աղբահանության եւ սանիտարական մաքրման սխեմայի էլեկտրոնային մոդել:

4. Աղբահանության եւ սանիտարական մաքրման սխեմաները ենթակա են հրապարակման՝ դրանց հաստատման օրվանից եռօրյա ժամկետում:»:

Հոդված 14. Օրենքի 14-րդ հոդվածի՝

1. վերնագրում «դրույքաչափը» բառից հետո լրացնել «եւ հաշվարկման մեթոդները» բառերը.

2. 2-րդ մասի 6-րդ եւ 7-րդ կետերում «առանձնացված» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ տարբերակված» բառերը.

3. 2-րդ մասի 6-րդ կետում «հաշվարկվում է սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված» բառերից հետո լրացնել «առավել բարձր» բառերը.

4. 3-րդ մասում «Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաեւ ոչ բնակելի տարածքների» բառերը փոխարինել «Ոչ բնակելի նպատակային նշանակության առնվազն 1000 քմ ընդհանուր մակերես զբաղեցնող շենքերում եւ (կամ) շինություններում եւ շենքերից ու շինություններից դուրս գտնվող առեւտրի եւ հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի» բառերով:

5. 3-րդ մասում «1-5-րդ կետերով» բառերից հետո լրացնել «եւ 2.1-ին մասով» բառերը:

6. 3-րդ մասի 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

7. 3.1-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3.1. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ոչ բնակելի շենքի եւ (կամ) շինության եւ (կամ) տարածքների մասով աղբահանության հարաբերությունները կարգավորվում են աղբահանության ծառայություն մատուցող եւ ստացող կողմերի միջեւ կնքված պայմանագրով: Ընդ որում, նշված շենքերի, շինությունների եւ տարածքների սեփականատերը սույն հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով եւ 2.1 մասով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության վերաբերյալ գրավոր ներկայացնում է համապատասխան համայնքի ղեկավարին կամ օպերատորին:»:

8. Հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.2-րդ եւ 3.3-րդ մասերով.

«3.2. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված դեպքում՝ ոչ բնակելի նպատակային նշանակության շենքի եւ (կամ) շինության եւ (կամ) տարածքի սեփականատերն է կազմակերպում ըստ զանգվածի կամ ծավալի աղբի հավաքման եւ հաշվարկման ապահովումը՝ սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված անձանց կողմից վերջիններիս ապահովման անհնարինության դեպքում: Ընդ որում, ըստ զանգվածի կամ ծավալի աղբի հավաքման դեպքում պարտադիր պետք է ապահովվի աղբի հավաքման ու հեռացման համայնքի ավագանու կողմից հաստատված կարգն ու պայմանները:

3.3. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված կարգավորումները չեն կիրառվում սույն հոդվածի 3.2 մասով սահմանվող ըստ զանգվածի կամ ծավալի աղբի հավաքման համար համախատասխան աղբամանների տեղադրման, ինչպես նաեւ աղբատար մեքենաների անարգելք մուտքի ու ելքի անհնարինության դեպքերում:»:

Հոդված 15. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.1 գլխով.

«ԳԼՈՒԽ 4.1 ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԹԱՆԻՉՆԵՐ

Հոդված 21.1. Տնտեսական խթանիչների կիրառումը

1. Աղբահանության ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կիրառվում են տնտեսական խթանիչներ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար՝ սույն օրենքի 14-րդ հոդվածում ամրագրված վճարների նվազեցմամբ՝ աղբի կանոնավորված տեսակավորման, դրանց գոյացման ծավալների նվազեցման, օգտահանման միջոցառումների կիրառման գործունեություն ծավալելու դեպքերում:»:

Հոդված 16.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով լրացվող Օրենքի 10-րդ հոդվածի 4.1-ին եւ սույն օրենքի 12-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասերով սահմանված դրույթները, որոնք ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, բացառությամբ սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով Օրենքի 4.1-ին հոդվածում նոր լրացվող 3.2-րդ կետով նախատեսված իրավական ակտի, որն ընդունվում է մինչեւ 2026 թվականի հունվարի 1-ը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. «Աղբահանության եւ սանիտարական մաքրման մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-237-Ն օրենքի՝ (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում «սույն օրենքով,» բառերից հետո լրացնել «Հարկային օրենսգրքով,» եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ~~»~~ օրենսգրքով,» բառերը:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքումի ~~հմաստով~~ -օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

1) աղբ՝ կոշտ կենցաղային թափոններ, ներառյալ թափոնները, որոնք գոյանում են համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների սանիտարական մաքրման արդյունքում.

2) աղբահանություն՝ գոյացող աղբի, ինչպես նաեւ շինարարական ու խոշոր եզրաչափերի աղբի հավաքում, պահում, փոխադրում եւ տեղադրում աղբավայրում, այդ թվում՝ դրանց տեսակավորում ու փոխադրում՝ աղբի վերաօգտագործման, օգտահանման, վերամշակման եւ վնասազերծման նպատակով.

3) կենսաքայքայվող ~~/~~(օրգանական~~/~~) աղբ՝ աէրոբիկ կամ անաէրոբիկ քայքայման ենթարկվող թափոն (օրինակ՝ սննդային թափոն, այգիներում ծառերի էտման, բույսերի ու թփերի սանիտարական մաքրման հետեւանքով առաջացող աղբ եւ այլն).

4) շինարարական աղբ՝ շինարարության, վերակառուցման (ներառյալ՝ քանդման), վերականգնման, ուժեղացման, արդիականացման, ինչպես նաեւ տարածքների բարեկարգման գործունեության արդյունքում առաջացող աղբ.

5) խոշոր եզրաչափերի աղբ՝ մարդու կենսագործունեության հետեւանքով կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում առաջացող աղբ, որոնց չափերը գերազանցում են 1 խորանարդ մետրը, եւ որոնց ֆիզիկական հատկություններից ելնելով (չափ, ծավալ կամ քաշ)՝ անհնար է դրանց հավաքումը, պահումը կամ փոխադրումը աղբի համար նախատեսված տեխնիկական միջոցներով.

6) աղբաման՝ աղբի կուտակման համար նախատեսված տարողություն, որոնց ձեւն ու չափը սահմանվում է համապատասխան համայնքի ավագանու կողմից.

7) աղբամուղ՝ բազնաբնակարան շենքերում ներկառուցված աղբ հավաքման, ուղղահայաց տեղափոխման եւ ժամանակավոր պահման համար նախատեսված ինժեներական սարքավորումների համալիր.

8) աղբահավաք խուց՝ բազմաբնակարան կամ հասարակական շենքերում աղբի ժամանակավոր պահման համար նախատեսված տարածք.

9) աղբամանների հարթակ՝ 0.75 խորանարդ մետր եւ ավել տարողությամբ աղբամանների տեղակայման համար նախատեսված տարածք, որոնց տեղադիրքը սահմանվում է սանիտարական նորմերին ու յուրաքանչյուր համայնքի աղբահանության սխեմաներին համապատասխան.

10) փոխաբեռնման կայան՝ բնապահպանական եւ տնտեսական արդյունավետությունից ելնելով աղբի ժամանակավոր պահման, սեղմման եւ հնարավոր տեսակավորման համար նախատեսված կայան.

11) աղբի հավաքման կենտրոն՝ հատուկ հատկացված տարածք, որտեղ հավաքվում է տեսակավորված աղբը՝ հետագա օգտահանման, վերաօգտագործման, վերամշակման եւ վնասազերծման նպատակով.

12) աղբավայր՝ բնապահպանական, քաղաքաշինական եւ սանիտարական նորմերին համապատասխան հատուկ ինժեներական կառույցների համակարգ՝ նախատեսված աղբի անվնաս տեղադրման, մեկուսացման եւ չեզոքացման համար.

13) սանիտարական մաքրում՝ համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների, այգիների, զբոսայգիների, պուրակների, հրապարակների, խաղահրապարակների, բակերի, մայթերի, վերգետնյա եւ ստորգետնյա անցումների, կամուրջների, սիզամարգերի, լողափերի, շատրվանների, ճամփեզրերի, կողնակների եւ ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումը աղբից, տերեւակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից եւ փողոցների երթեւեկելի մասերի ջրում-լվացումը, փողոցների, կամուրջների, անցումների եւ մայթերի՝ ձյունից եւ սառույցից մաքրումը, համայնքի ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների եւ աղբամանների հարթակների սպասարկումը.

14) օպերատոր՝ համայնքին~~/~~ կամ համայնքներին, կամ դրանց վարչական տարածքում կամ տարածքի մի մասում աղբահանության եւ (կամ) սանիտարական մաքրման ծառայություններ մատուցող կազմակերպություն ~~(կազմակերպություններ)~~ կամ անհատ ձեռնարկատեր ~~(անհատ ձեռնարկատերեր)~~.

15) աղբի քանակի նվազեցում՝ աղբի գոյացման վայրում՝ սկզբնաղբյուրում, գոյացող աղբի քանակի նվազեցման նպատակով համալիր միջոցառումների կիրառում.

16) աղբի տեսակավորում՝ վերաօգտագործման, օգտահանման եւ վերամշակման ենթակա աղբի տեսակների տարանջատումն ու առանձին հավաքումը աղբի գոյացման վայրում՝ սկզբնաղբյուրում, կամ աղբի տեսակավորման կայաններում.

17) աղբի օգտահանում՝ աղբի օգտակար օգտագործում այլ ապրանքի ~~/~~»(արտադրանքի) արտա~~դրա~~դրության համար, ներառյալ վերաօգտագործումը, երկրորդային ռեսուրսների ստացումը եւ աղբից օգտակար բաղադրիչների առանձնացումը.

18) աղբի վերաօգտագործում՝ աղբի օգտագործում ի սկզբանե նախատեսված կամ այլ նպատակով, առանց էներգիայի վերականգնման.

19) աղբի վերամշակում՝ տեխնոլոգիական գործընթացների արդյունքում աղբի ֆիզիկական, քիմիական եւ կենսաբանական հատկությունների փոփոխություն.

20) աղբի փոխադրում՝ աղբի հավաքում եւ տեղափոխում դրանց կուտակման վայրից դեպի վերաօգտագործման, վերամշակման, օգտահանման, վնասազերծման վայրեր եւ(կամ) աղբավայր.

21) աղբի սեփականատեր՝ աղբ գոյացնող ֆիզիկական, իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, ում տիրապետման, օգտագործման ու տնօրինման ներքո է աղբը.

22) աղբահանության եւ սանիտարական մաքրման կառավարման տեղական պլան՝ յուրաքանչյուր համայնքում գոյացող աղբի հավաքման, տեղափոխման, պահպանման, տեղադրման (հեռացման), վերամշակման ու օգտահանման գործընթացների պլանավորում, իրագործում ու մշտադիտարկում.

23) աղբահանության եւ սանիտարական մաքրման տարածաշրջանային գոտիավորված սխեմա՝ Հայաստանի Հանրապետության տարածքում աղբահանության առավել արդյունավետ գոտիավորում՝ կախված աշխարհագրական տեղադիրքերից, գոյացող աղբի քանակից և~~,~~ տեսակից ~~եւ աշխարհագրական տեղադիրքերից~~»:

2. Այն հասկացությունները, որոնք սահմանված չեն սույն օրենքով, ունեն «Թափոնների մասին» օրենքով սահմանված հասկացությունների իմաստը:»:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 4. Աղբահանության եւ սանիտարական մաքրման ոլորտի պետական քաղաքականության հիմնական սկզբունքները եւ զարգացման ուղղություններն ու նպատակները

1. Աղբահանության եւ սանիտարական մաքրման ոլորտի պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն են.

1) մարդու առողջության եւ շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցումը եւ չեզոքացումը.

2) բնակության համար հարմարավետ եւ էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովումը.

3) Տարածքների աղտոտման, աղբակույտերի առաջացման անթույլատրելիությունը եւ տարածքների մաքրումը աղբից.

4) առաջացող աղբի քանակի նվազեցումը.

5) աղբի տեսակավորման, վերաօգտագործման, վերամշակման եւ օգտահանման գործողությունների կիրառումը եւ աղբավայրերում տեղադրվող աղբի ծավալների նվազեցումը.

6) շրջանաձեւ տնտեսության խթանումը.

7) աղբահանության ծառայության վճարովի լինելը:-

2. Աղբահանության եւ սանիտարական մաքրման ոլորտի պետական քաղաքականության զարգացման ուղղություններն ու նպատակներն են.

1) աղբահանության եւ սանիտարական մաքրման ~~հուսալի,~~ պարտադիր եւ պարբերաբար իրականացումը.

2) աղբի տեսակավորված համակարգի ներդրումը.

3) հանրապետության ողջ տարածքում գոյացող աղբի հավաքման, տեղափոխման եւ անվտանգ հեռացման կամ օգտահանման ու վերամշակման ապահովումը.

4) առաջացող աղբի առավելագույնս օգտահանումը.

5) սակավաթափոն եւ անթափոն միջոցառումների եւ տեխնոլոգիաների կիրառումը.

6) աղբահանության եւ սանիտարական մաքրման աշխատանքների մեքենայացումը.

7) ոլորտում միջհամայնքային համագործակցությունը.

8) համայնքային բյուջեի հաշվին կամ հանրային-մասնավոր համագործակցության շրջանակներում աղբահանության եւ սանիտարական մաքրման աշխատանքների իրականացումը:»:

Հոդված 4. Օրենքի 4.1-ին հոդվածի՝

1. 1-ին մասի 3-րդ ենթակետում «հեռացման» բառից հետո լրացնել «, առաջացող աղբի քանակի նվազեցմանն ուղղված» բառերը.

2. 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.2-րդ եւ 3.3-րդ կետերով.

«3.2) հաստատում է Հայաստանի Հանրապետության աղբահանության եւ սանիտարական մաքրման տարածաշրջանային գոտիավորված սխեմաները.

3.3) հաստատում է գոյություն ունեցող եւ գործող աղբավայրերի շահագործման, բարեկարգման ու փակման նվազագույն նորմերը:»:

Հոդված 5. Օրենքի 4.2-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի 5-րդ կետում «չհսկվող եւ չարտոնագրված» բառերը փոխարինել «բնապահպանական, սանիտարական եւ քաղաքաշինական նորմերին չհամապատասխանող» բառերով.

2. ~~Հոդվածի~~ 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.1-ին կետով.

«4.1) հաստատում է աղբավայրերի ու փոխաբեռնման կայանների նախագծման, կառուցման, շահագործման նորմերն ու կարգերը, աղբի տարբեր տեսակների հավաքման, տեղափոխման, պահման ու հեռացման ընթացակարգերը, աղբի հավաքման եւ փոխադրման համար ներգրավվող կազմակերպությունների համար գործունեության պայմանները, աղբահանության եւ սանիտարական մաքրման ոլորտի մեթոդական ուղեցույցները.»:

Հոդված 6. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.3-րդ եւ 4.4-րդ հոդվածներով.

«Հոդված 4.3. Աղբի նկատմամբ սեփականության իրավունք

1. Աղբը հանդիսանում է սեփականության օբյեկտ: Աղբ առաջացնողը ձեռք է բերում աղբի սեփականության իրավունք դրա գոյացման պահից, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

2. Աղբի նկատմամբ սեփականության իրավունքը պատկանում է ֆիզիկական, իրավաբանական անձին եւ անհատ ձեռնարկատերերին, որոնց գործունեությունը հանգեցնում է աղբի առաջացմանը, եւ իրենց սեփականության իրավունքի իրացման ընթացքում, պարտավոր են միջոցներ ձեռնարկել շրջակա միջավայրի եւ հանրային առողջության վնասը կանխելու համար:

3. Աղբի սեփականատերն իրավունք ունի դրանց տնօրինման, այդ թվում՝ օտարման եւ հեռացման այլ գործարքի պայմանագրի հիման վրա այլ անձանց փոխանցել սեփականության իրավունքը, եթե այդ անձիք ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աղբահանության ոլորտում գործունեություն իրականացնելու թույլտվություն:

4. Աղբի նկատմամբ սեփականության իրավունքը դադարում է բնապահպանական եւ սանիտարական նորմերին համապատասխան այն սեփականության իրավունքով կամ որևէ այլ իրավունքով տիրապետման կամ օգտագործման տարածքից հեռացնելու պահից:

5. Հողամասերի սեփականատերերը կամ օգտագործողները, որոնց տարածքում հայտնաբերվել են իրենց չպատկանող աղբ, պարտավոր են այդ մասին տեղեկացնել տեղական ինքնակառավարման մարմնին հայտնաբերելուց ոչ ուշ քան աշխատանքային օրվա 24 ժամվա ընթացքում: Տեղական ինքնակառավարման մարմինն էլ իր հերթին պարտավոր է միջոցներ ձեռնարկել աղբի սեփականատիրոջ որոշման եւ դրա հետ գործածության մասով՝ տեղեկացվելուց հետ եռօրյա ժամկետում:

Հոդված 4.4 Աղբահանության եւ սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանը

1. Աղբահանության եւ սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանը հաստատում է համայնքի ավագանին՝ համայնքի հնգամյա զարգացման ծրագրին, ինչպես նաեւ ամենամյա աշխատանքների պլաններին կից հավելվածով:

2. Աղբահանության եւ սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանը բաղկացած է հետեւյալ բաժիններից.

1) առկա իրավիճակի գնահատում.

2) պլանավորում.

3) մշտադիտարկում եւ հաշվետվողականություն:

3. Աղբահանության եւ սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանի մեթոդական ուղեցույցը հաստատում է աղբահանության եւ սանիտարական մաքրման ոլորտի պետական կառավարման լիազորված մարմինը»:

Հոդված 7. Օրենքի 5-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 5. Աղբահանության վճարը

1.Աղբահանության վճարը սույն օրենքով նախատեսված վճարողների կողմից աղբահանության դիմաց սույն օրենքով սահմանված կարգով եւ սույն օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում համայնքի ավագանու կողմից սահմանված չափով համայնքի բյուջե կամ արտաբյուջե գանձվող պարտադիր գանձույթ է:

2. Աղբահանության վճարի կամ դրա տեսակի փոփոխման դեպքում սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անձիք պարտադիր իրազեկում են աղբահանության փոփոխված վճարի չափի կամ դրա տեսակի մասին աղբահանության վճար վճարողներին՝ մինչեւ հաջորդ ամսվա 5-ը ներառյալ: Ընդ որում, իրազեկումն իրականացվում է համայնքի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակմամբ, իսկ ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերի ու շինությունների դեպքում՝ աղբահանության վճարողի

հաշվառման հասցեին կամ~~ կամ~~ վերջինիս կողմից տրամադրված էլեկտրոնային փոստին ծանուցում ուղարկելու միջոցով:

3. Աղբահանության լրացուցիչ ծառայությունների մատուցման անհրաժեշտության դեպքում՝ աղբահանության ծառայություն մատուցող ու ստացող կողմերի միջեւ կնքվում է պայմանագիր՝ սահմանելով դրույքաչափը, աղբահանության ծառայությունների մատուցման կարգն ու ձեւը:»:

Հոդված 8. Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասում ում «արգելվում է» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքի 21.1 հոդվածով սահմանված դեպքերի» բառերը:

Հոդված 9. Օրենքի 8-րդ հոդվածի~~ում~~՝

1. 1-ին մասում «իրականացնում են» բառերից հետո լրացնել «համապատասխան տեխնիկայի ու սարքավորումների հագեցվածությամբ» բառերը.

2. Հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 8-րդ մասով.

«8. Տեսակավորված աղբի հավաքում եւ փոխադրում կարող են իրականացնել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձիք, ինչպես նաեւ աղբի սեփականատերը, իրավաբանական, ֆիզիկական անձիք ու անհատ ձեռնարկատերերը:»:

Հոդված 10. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1. 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Աղբի հավաքումը կատարվում է՝

1) անմիջապես աղբ գոյացնողից եւ հեռացվում է անմիջապես աղբատար մեքենա՝ առանց աղբամաններում կուտակելու.

2) աղբամանների միջոցով՝ աղբը հավաքվում կամ պահվում է համայնքի ընդհանուր օգտագործման տարածքներում այդ նպատակով սահմանված կամ նախատեսված հատուկ հարթակների վրա տեղադրված համայնքի կամ օպերատորի տրամադրած տարողություններում՝ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների եւ նորմերի պահանջների պահպանմամբ.

3) աղբամուղերի միջոցով՝ աղբը հավաքվում է աղբահավաք խցերում՝ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների եւ նորմերի պահանջների պահպանմամբ.

4) փոխաբեռնման կայանների միջոցով, որտեղ ժամանակավոր հավաքվում, սեղմվում եւ հնարավոր տեսակավորվում է աղբը՝ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների եւ նորմերի պահանջների պահպանմամբ, այնուհետեւ տեղափոխվում վերամշակման, օգտահանման արտարդամասեր կամ աղբավայր.

5) աղբի հավաքման կենտրոնների միջոցով, որտեղ ժամանակավոր հավաքվում է տեսակավորված աղբը՝ դրանց հետագա գործածության նպատակով: Ընդ որում, աղբի հավաքման կենտրոններ տեսակավորված աղբը կարող է տեղափոխել օպերատորը, ինչպես նաեւ ֆիզիկական, իրավաբանական անձիք եւ անհատ ձեռնարկատերերը՝ իրենց միջոցների հաշվին՝ համայնքի ղեկավարի թույլտվությամբ:»:

2. 3-րդ մասում «Ոչ կենցաղային» բառերը փոխարինել «Շշինարարական» բառ~~եր~~ով, «հավաքվում եւ» բառերը փոխարինել «հավաքվում է անմիջապես աղբ ~~առաջացնողից~~ գոյացնողից առանց աղբամաններում կուտակելու կամ»» բառերով:

3. Հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-ին, 3.2-րդ եւ 4.1-ին մասերով.

«3.1. Օգտահանման եւ վերամշակման ենթակա աղբը (թղթե, ապակե, պլաստիկ եւ կենսաքայքայվող աղբ) հավաքվում է համայնքի, օպերատորի կամ սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված անձանց կողմից տրամադրված առանձնացված աղբամաններում կամ կոնտեյներներում:

3.2. Վտանգավոր թափոնների հավաքման գործընթացներն իրականացվում են «Թափոնների մասին» օրենքով սահմանված կարգով:»:

«4.1. Աղբամաններում արգելվում է տեղադրել կամ պահել արտադրության թափոնները, էլեկտրոնային եւ էլեկտրատեխնիկական սարքավորումների թափոնները, սնդիկ պարունակող լամպերը եւ այլ արտադրանքը, էլեկտրական կուտակիչները եւ մարտկոցները, անվադողերը, այրվող, շիկացած կամ տաք աղբը, բժշկական թափոնները, խոշոր եզրաչափերի աղբը, ձյունը եւ սառույցը, հեղուկ թափոնները, ինչպես նաեւ այլ վտանգավոր թափոններ, որոնք կարող են վնաս հասցնել աղբահանություն իրականացնող անձանց կյանքին եւ առողջությանը:»:

Հոդված 11. Օրենքի 11-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2-րդ եւ 3-րդ մասերով.

«2. Աղբի փոխադրումն իրականացվում է դրա համար նախատեսված հատուկ մասնագիտացված տեխնիկայի եւ համապատասխան անձնակազմի միջոցով՝ սանիտարահիգիենիկ կանոններին եւ նորմերին, ինչպես նաեւ սանիտարական սխեմային համապատասխան:

3. Շինարարական, խոշոր եզրաչափերի, օգտահանման եւ վերամշակման ենթակա աղբը փոխադրվում է առանձին-առանձին՝ սահմանված նորմերին ու կանոններին համապատասխան:»:

Հոդված 12. Օրենքի 12-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 12. Աղբի տեղադրմանը եւ աղբավայրերի շահագործմանը ներկայացվող պահանջները

1. Աղբը տեղադրվում է բնապահպանական, սանիտարական եւ քաղաքաշինական նորմերին համապատասխանող աղբավայրերում կամ ենթարկվում է վերամշակման:

2. Աղբավայրերում աղբի տեղադրումն իրականացվում է աղբավայրերի շահագործման եւ սանիտարահիգիենիկ կանոնների պահանջների պահպանմամբ:

3. Համայնքային աղբավայրերի դեպքում աղբի տեղադրման համար վճարը սահմանում է համայնքի ավագանին:

4. Արգելվում է աղբի տեղադրումը դրա համար չնախատեսված վայրերում:

5. Արգելվում է պայթուցիկ եւ դյուրավառ նյութերի, բժշկական հաստատություններից ու սպանդանոցներից առաջացած եւ այլ կենսաբանական թափոնների, էլեկտրոնային եւ էլեկտրատեխնիկական սարքավորումների թափոնների, սնդիկ պարունակող լամպերի եւ այլ արտադրանքի, էլեկտրական կուտակիչների եւ մարտկոցների, փոխադրամիջոցների եւ դրանց անվադողերի, ինչպես նաեւ առանց հատուկ տարրաների մեջ պահեստավորված հեղուկ թափոնների տեղադրումը աղբավայրերում:

6. Սահմանափակվում է կենսաքայքայվող աղբի տեղադրումը աղբավայրերում:

7. Արգելվում է աղբավայրում աղբի բաց եղանակով այրումը:

8. Աղբավայրերը շահագործող օպերատորները շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության բացահայտման եւ կանխարգելման նպատակով իրականացնում են աղբավայրի հսկողություն, ինչպես նաեւ հակահրդեհային միջոցառումներ՝ աղբի ինքնայրումը կանխելու համար:»:

Հոդված 13. Օրենքի 13-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 13. Աղբահանության եւ սանիտարական մաքրման սխեմաներին ներկայացվող պահանջները

1. Աղբահանության եւ սանիտարական մաքրման սխեման պարունակում է հետեւյալ հիմնական տարրերը. առաջացող աղբի ծավալների հաշվարկը, սանիտարական մաքրման ենթակա տարածքները, սանիտարական մաքրման աշխատանքների ծավալները, աղբի հավաքման, պահման եւ փոխադրման մեթոդներն ու ժամային գրաֆիկները, աղբի տեղադրման, տեսակավորման եւ վնասազերծման, վերամշակման ու օգտահանման ձեւերն ու մեթոդները, անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները, սանիտարական մաքրման ենթակա հուշարձանների տեղակայումը:

2. Համայնքի աղբահանության եւ սանիտարական մաքրման սխեման հաստատում է համայնքի ավագանին:

3. Աղբի հավաքման, կուտակման, ժամանակավոր պահման, փոխադրման, վերաօգտագործման, օգտանահման, վնասազերծման, վերամշակման եւ աղբավայրում տեղադրման գործունեության կազմակերպման համար հանրապետության աղբահանության տարածաշրջանային գոտիավորված տարածքների համար հաստատվում են աղբահանության եւ սանիտարկան մաքրման սխեմաները, որոնք ներառում են՝

1) գոտիավորված տարածքում աղբ առաջացնող աղբյուրների վերաբերյալ տվյալներ.

2) գոտիավորված տարածքում գոյացող աղբի ծավալի եւ տեսակների վերաբերյալ տվյալներ.

3) գոտիավորված տարածքում վերաօգտագործման, վնասազերծման, օգտահանման եւ վերամշակման ենթակա աղբի նպատակային ցուցանիշների վերաբերյալ տվյալներ.

4) գոտիավորված տարածքում աղբի կուտակման վայրերի գտնվելու վերաբերյալ տեղեկատվություն.

5) գոտիավորված տարածքում օգտահանման, վնասազերծման, վերամշակման ենթակա աղբի եւ աղբի հեռացման օբյեկտների գտնվելու վայրի վերաբերյա տվյալներ.

6) գոտիավորված տարածքում նախատեսվող աղբի վերամշակման, օգտահանման, վնասազերծման օբյեկտների եւ աղբավայրերի կառուցման վերաբերյալ տեղեկատվություն

7) գոտիավորված տարածքի աղբահանության եւ սանիտարական մաքրման սխեմայի էլեկտրոնային մոդել:

4. Աղբահանության եւ սանիտարական մաքրման սխեմաները ենթակա են հրապարակման՝ դրանց հաստատման օրվանից եռօրյա ժամկետում:»:

Հոդված 14. Օրենքի 14-րդ հոդվածի՝

1. վերնագրում «դրույքաչափը» բառից հետո լրացնել «եւ հաշվարկման մեթոդները» բառերը.

2. 2-րդ մասի 6-րդ եւ 7-րդ կետերում «առանձնացված» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ տարբերակված» բառերը.

3. 2-րդ մասի 6-րդ կետում «հաշվարկվում է սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված» բառերից հետո լրացնել «առավել բարձր» բառերը.

4. 3-րդ մասում «Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաեւ ոչ բնակելի տարածքների» բառերը փոխարինել «Ոչ բնակելի նպատակային նշանակության առնվազն 1000 քմ ընդհանուր մակերես զբաղեցնող շենքերում եւ (կամ) շինություններում եւ շենքերից ու շինություններից դուրս գտնվող առեւտրի եւ հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի» բառերով:

5. 3-րդ մասում «1-5-րդ կետերով» բառերից հետո լրացնել «եւ 2.1-ին մասով» բառերը:

6. 3-րդ մասի 3-րդ կետը ~~ոՀ~~ւժը կորցրած ճանաչել ~~Հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը~~:

7. ~~Հոդվածի~~ 3.1-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3.1. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ոչ բնակելի շենքի եւ (կամ) շինության եւ (կամ) ~~շինությունների ու~~ տարածքների մասով աղբահանության հարաբերությունները կարգավորվում են աղբահանության ծառայություն մատուցող եւ ստացող կողմերի միջեւ կնքված պայմանագրով: Ընդ որում, նշված շենքերի, շինությունների եւ տարածքների սեփականատերը սույն հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով եւ 2.1 մասով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության վերաբերյալ գրավոր ներկայացնում է համապատասխան համայնքի ղեկավարին կամ օպերատորին:»:

8. Հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.2-րդ եւ 3.3-րդ մասերով.

«3.2. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված դեպքում՝ ոչ բնակելի նպատակային նշանակության շենքի եւ (կամ) շինության եւ (կամ) տարածքի սեփականատերն է կազմակերպում ըստ զանգվածի կամ ծավալի աղբի հավաքման եւ հաշվարկման ապահովումը՝ սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված անձանց կողմից վերջիններիս ապահովման անհնարինության դեպքում: Ընդ որում, ըստ զանգվածի կամ ծավալի աղբի հավաքման դեպքում պարտադիր պետք է ապահովվի աղբի հավաքման ու հեռացման համայնքի ավագանու կողմից հաստատված կարգն ու պայմանները:

3.3. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված կարգավորումները չեն կիրառվում սույն հոդվածի 3.2 մասով սահմանվող ըստ զանգվածի կամ ծավալի աղբի հավաքման համար համախատասխան աղբամանների տեղադրման, ինչպես նաեւ աղբատար մեքենաների անարգելք մուտքի ու ելքի անհնարինության դեպքերում:»:

Հոդված 15. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.1 գլխով.

«ԳԼՈՒԽ 4.1 ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԹԱՆԻՉՆԵՐ

Հոդված 21.1. Տնտեսական խթանիչների կիրառումը

1. Աղբահանության ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կիրառվում են տնտեսական խթանիչներ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար՝ սույն ~~Ծ~~օրենքի 14-րդ հոդվածում ամրագրված վճարների նվազեցմամբ՝ աղբի կանոնավորված տեսակավորման, դրանց գոյացման ծավալների նվազեցման, օգտահանման միջոցառումների կիրառման գործունեություն ծավալելու դեպքերում:»:

Հոդված 16. ~~Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով լրացվող Օրենքի 10-րդ հոդվածի 4.1-ին~~րդ~~ եւ սույն օրենքի 12-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասերով սահմանված դրույթները, որոնք ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, բացառությամբ սույն օրենքի 4~~.1~~-րդ հոդվածի 2-րդ մասով Օրենքի 4.1-ին հոդվածում նոր լրացվող 3.2-րդ կետով~~մասով~~ նախատեսված իրավական ակտի, որն ընդունվում է մինչեւ 2026 թվականի հունվարի 1-ը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-444-28.11.2022-ՏՏԳԾ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	***ՀՀ Կառավարություն***	**Վերնագիր**	Նախագծի վերնագրից առաջարկվում է հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:	**Ընդունվել է:**	Ընդունվել է:

2.	***ՀՀ Կառավարություն***	**1-ին հոդված**	Նախագծի 1-ին՝ 1) հոդվածից առաջարկում ենք հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը: 2) հոդվածի «վերաբերյալ» բառից հետո դրված չակերտ կետադրական նշանը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	***ՀՀ Կառավարություն***	**2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող Օրենքի 3-րդ հոդվածի՝ 1) 1-ին մասում «Սույն օրենքի իմաստով» բառերն առաջարկում ենք փոխարինել «Սույն օրենքում» բառերով՝ անհարկի ավելորդ բառեր չկիրառելու նպատակով: 2) 1-ին մասի՝ ա. 3-րդ կետում «//» կետադրական նշանը փոխարինել «()» նշանով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայերենում նման կետադրական նշան գոյություն չունի, բ. 14-րդ կետում «համայնքին» բառից հետո դրված «/» կետադրական նշանը հանել, գ. 17-րդ կետում «ապրանքի» բառից հետո դրված «/» կետադրական նշանը հանել, իսկ	Ընդունվել է	Ընդունվել է:

			«արտադրանքի» բառը նշել փակագծերում: 3) 1-ին մասի 14-րդ կետում առաջարկվում է հանել «(կազմակերպություններ) և (անհատ ձեռնարկատերեր)» բառերը՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, այն է. «Եթե նորմատիվ իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաեւ այդ բառի հոգնակիի վրա եւ ընդհակառակը: 4) 1-ին մասի 17-րդ կետում վրիպակը շտկվել է «արտադրադրության» բառի փոխարեն լրացվել է «արտադրության» բառը: 5) 1-ին մասի 23-րդ կետում՝ «գոտիավորում՝ կախված» բառերից հետո ձևակերպումը շտկվել է՝ «գոտիավորում՝ կախված» բառերից հետո լրացվել է «աշխարհագրական տեղադիրքերից» բառերով:		
4.	***ՀՀ Կառավարություն***	**3-րդ հոդված**	Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվող Օրենքի 4-րդ հոդվածի՝ 1) 2-րդ մասում՝ «մաքրման ոլորտի» բառերից հետո առաջարկում ենք լրացնել «պետական քաղաքականության» բառերը, հաշվի առնելով նշված հոդվածի վերնագիրը: 2) 2-րդ մասի 1-ին կետում «սանիտարական մաքրման» բառերից հետո հանել «հուսալի» բառը, քանի որ պարտադիր և պարբերաբար ծառայությունների մատուցումը իրենից ենթադրում նաև հուսալի աղբահանություն և սանիտարական մաքրում:	Ընդունվել է	Ընդունվել է:

5.	***ՀՀ Կառավարություն***	**5-րդ հոդված**	Նախագծի 5-րդ հոդվածով առաջարկվող Օրենքի 4.2-րդ հոդվածի 2-րդ մասում՝ անհարկի կրկնություններից խուսափելու նպատակով, հանել «Հոդվածի» բառը: Նույն դիտարկումը վերաբերելի է նաև 14-րդ հոդվածի 7-րդ կետին:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.	***ՀՀ Կառավարություն***	**6-րդ հոդված**	Նախագծի 6-րդ հոդվածով լրացվող Օրենքի 4.3-րդ հոդվածի՝ 1) 1-ին և 3-րդ մասերում առկա «ՀՀ» հապավումները փոխարինել «Հայաստանի Հանրապետության» բառերով ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է. «Արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաեւ բառերի կամ տերմինների հապավումներ»: 2) 2-րդ և 4-րդ մասերում «Աղբի սեփականության» բառերը փոխարինել «Աղբի նկատմամբ սեփականության» բառերով, համապատասխանեցնելով հոդվածի վերնագրին: 3) Նույն հոդվածի 4-րդ մասում հստակեցվել է «սեփականության տարածքից» ձևակերպումը՝ քանի որ ձևակերպումից պարզ չէ, թե ում սեփականության իրավունքով պատկանող տարածքին է այն վերաբերում: Հաշվի առնելով վերոգրյալը «սեփականության տարածքից» բառերը փոխարինվել են «սեփականության իրավունքով կամ որևէ այլ իրավունքով տիրապետման կամ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			օգտագործման տարածքից» բառերով: 4. Նույն հոդվածի 5-րդ մասում լրացվել է «աշխատանքային օրվա» բառերը՝ հաշվի առնելով, որ դրույթով անհրաժեշտ է 24 ժամվա ընթացքում տեղեկացնել ՏԻՄ-ին, հստակեցնելով աշխատանքային օրերի ընթացքում 24 ժամվա մեջ:		
7.	***ՀՀ Կառավարություն***	**7-րդ հոդված**	Նախագծի 7-րդ հոդվածով առաջարկվող Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասից հանել կրկնվող «կամ» բառը:	Ընդունվել է	Ընդունվել է:
8.	***ՀՀ Կառավարություն***	**9-րդ հոդված**	Նախագծի 9-րդ հոդվածի «հոդվածում» բառը փոխարինել «հոդվածի» բառը:	Ընդունվել է	Ընդունվել է:
9.	***ՀՀ Կառավարություն***	10-րդ հոդված	Նախագծի 10-րդ հոդվածով առաջարկվող Օրենքի 10-րդ հոդվածի՝ 1) 1-ին մասի 5-րդ կետում «իրենց միջոցների հաշվին» բառերից հետո լրացնել «՝ համայնքի ղեկավարի թույլտվությամբ» բառերը՝ հաշվի առնելով, որ Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված խոշոր եզրաչափերի և	Ընդունվել է	Ընդունվել է:

			շինարարական աղբի հավաքման եւ տեղափոխման համար պահանջվում է թույլտվություն համայնքի ղեկավարի կողմից, այս պարագայում նույնպես անհրաժեշտ է համայնքի ղեկավարի թույլտվությունը՝ աղբահանության գործընթացը համակարգելու նպատակով: 2) 2-րդ մասում՝ ա.«շինարարական» բառն առաջարկվում է շարադրել մեծատառով, բ. «բառերով» բառը փոխարինել «բառով» բառով, գ. «առաջացնողից» բառն առաջարկվում է փոխարինել «գոյացնողից» բառով, քանի որ մյուս կարգավորումներում կիրառվում է նշված եզրույթը: 3) 3-րդ՝ ա. մասում դասական թվականների ճիշտ գրելաձևն ապահովելու համար առաջարկվում է «3.1, 3.2 եւ 4.1» ձեւակերպումը փոխարինել «3.1-ին, 3.2-րդ եւ 4.1-ին» ձեւակերպմամբ: բ. մասով առաջարկվող 4. 1-ին կետից առաջ դրված չակերտը հանել, ինչպես նաև «որոնքը» բառի «ը» տառը:		

10.	***ՀՀ Կառավարություն***	**14-րդ հոդված**	Նախագծի 14-րդ հոդվածով առաջարկվող Օրենքի 14-րդ հոդվածի՝ 1) 6-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «6. 3-րդ մասի 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:», 2) 7-րդ մասից հանել «Հոդվածի» բառը, 3) 7-րդ մասով առաջարկվող 3.1 մասում «շենք-շինությունների ու տարածքների» բառերը փոխարինել «շենքի և (կամ) շինության և (կամ), տարածքների» բառերով, համապատասխանեցնելով 14-րդ հոդվածի 8-րդ մասով լրացվող «շենքի և (կամ) շինության և (կամ) տարածքի» ձևակերպմանը: 4) 8-րդ մասում դասական թվականների ճիշտ գրելաձևն ապահովելու համար առաջարկվում է «3.2 եւ 3.3» ձեւակերպումը փոխարինել «3.2-րդ եւ 3.3-րդ» ձեւակերպմամբ:	Ընդունվել է	Ընդունվել է:
11.	***ՀՀ Կառավարություն***	**15-րդ հոդված**	Նախագծի 15-րդ հոդվածով առաջարկվող Օրենքում լրացվող 4.1 գլխի 21.1-ին հոդվածի 1-ին մասում «խթաններ» բառը փոխարինել «խթանիչներ» բառով՝ համապատասխանեցնելով հոդվածի վերնագրին, իսկ «օրենքի» բառը գրել մեծատառով:	Ընդունվել է	Ընդունվել է:
12.	***ՀՀ Կառավարություն***	**16-րդ հոդված**	Նախագծի 16-րդ հոդվածի՝ 1) վերնագիրը հանել 2) 1-ին և 2-րդ մասերը շարադրել հետևյալ	Ընդունվել է	Ընդունվել է:

			խմբագրությամբ՝ «1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով լրացվող Օրենքի 10-րդ հոդվածի 4.1-ին և սույն օրենքի 12-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասերով սահմանված դրույթները, որոնք ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից: 2. Սույն օրենքից բխող ենթա- օրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, բացառությամբ սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով Օրենքի 4.1-ին հոդվածում նոր լրացվող 3.2-րդ կետով նախատեսված իրավական ակտի, որն ընդունվում է մինչեւ 2026 թվականի հունվարի 1-ը:»: Խմբագրությամբ հստակեցվել են հղումները:		
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					
1.	***ՀՀ Կառավարություն***	**1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածի՝ 1) «1985 թվականի դեկտեմբերի 6-ի» ձեւակերպումն առաջարկվում է շարադրել «Վարչական» բառից առաջ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, իսկ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			«(այսուհետ՝ Հոդված)» բառերը հանել: 2) 1-ին մասին հաջորդող չհամարակալված պարբերությունն առաջարկվում է համարակալել՝ «2.» -ով, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, 3) համարակալված «2.» -րդ մասով լրացվող՝ ա. 7.1 մասում «1խմ» բառը փոխարինել «1 խորանարդ մետր» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 21-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, բ. «8.1» մասում՝ «երեքնապատիկից» բառը փոխարինել «եռապատիկից» բառով:		
2.	***ՀՀ Կառավարություն***	**3-րդ հոդված**	Նախագծի 3-րդ հոդվածում «2023 թվականի հունիսի 1-ից» ձևակերպումն առաջարկվում է խմբագրել «2024 թվականի հունվարի 1-ից» բառերով, քանի որ նշված գործառույթներն իրականացնելու համար ֆինանսական միջոցներ են պահանջվում, իսկ տարվա կեսից այն նախատեսելը նպատակահարմար չէ: Փոփոխությունը հնարավորություն կտա համայնքներին պլանավորել աղբավայրերի բարեկարգման և շահագործման ծախսերն ու աշխատանքները:	Ընդունվել է:	Ընդունվել է: